«Թեղուտ» ՓԲԸ

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ
2023թ. համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ	3
Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն	5
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն	7
Դրամական հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն	8
Ամփոփ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն	9

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ. Սարգսյան փ. 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«Թեղուտ» ՓԲԸ-ի բաժնետերերին և Տնօրենների խորհրդին

Կարծիք

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2023թ., այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և համապատասխան ծանոթագրությունը, պատրաստվել են «Թեղուտ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա: Մենք արտահայտել ենք վերապահումով կարծիք այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2024թ. դեկտեմբերի 30-ի մեր աուդիտորական եզրակացությունում:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին՝ Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով: Այնուամենայինիվ, ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ենթակա են խեղաթյուրման նույն չափով որքանով և Ընկերության 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները:

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջվող բոլոր բացահայտումները: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների և վերջիններիս վերաբերյալ մեր եզրակացության ընթերցումը չի փոխարինում Ընկերության աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների և վերջիններիս վերաբերյալ մեր եզրակացության ընթերցմանը:

Աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները և վերջիններիս վերաբերյալ մեր եզրակացությունը

Մենք արտահայտել ենք վերապահումով կարծիք աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2024թ. դեկտեմբերի 30-ի մեր աուդիտորական եզրակացությունում: Վերապահումով կարծիքի հիմքը հետևյալն է՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա էին հայտանիշներ, որ հիմնական միջոցների փոխհատուցվող գումարը կարող էր ցածր լինել վերջիններիս 86,752,113 հազար դրամ հաշվեկշռային արժեքից 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ ՀՀՄՍ 36 *«Ակտիվների արժեզրկում»* համաձայն՝ այդպիսի հայտանիշների առկայության դեպքում ղեկավարությունը պետք է իրականացնի ակտիվների փոխհատուցվող գումարի գնահատում: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդպիսի գնահատում չէր իրականացվել: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ղեկավարությունն իրականացրել է ակտիվների փոխհատուցվող գումարի գնահատում և ճանաչել է 7,470,935 հազար դրամ գումարով արժեզրկումից կորուստ 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

Մենք անկարող էինք որոշել 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների, կուտակված վնասի և 2023թ. դեկտեմբերի 31-ին և 2022թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարիների վնասի/շահույթի մասով ճշգրտումների ֆինանսական ազդեցության գումարը, որոնք կկատարվեին 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների փոխհատուցվող գումարը գնահատելու դեպքում:

Աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունը ներառում է նաև *«Էական անորոշություն գործունեության անընդհատության հետ կապված»* բաժինը, որտեղ ուշադրություն ենք հրավիրում աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ 2 (բ)-ին և 18-ին: Ծանոթագրություններ 2 (բ)-ում և 18-ում նշված է, որ 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Ընկերությունը կրել է 33,440,217 հազար դրամի չափով զուտ վնաս և այդ ամսաթվի դրությամբ ունի 161,304,750 հազար դրամ գումարով բանկերից ստացված ժամկետանց վարկեր, որոնց մարման ժամկետը լրացել է 2023թ-ին, և խախտել է այդ վարկային պայմանագրերի կովենանտները: Համապատասխանաբար 161,304,750 հազար դրամ ընդհանուր հաշվեկշռային արժեքով վարկերը դասակարգվել են որպես ընթացիկ պարտավորություններ, որի արդյունքում ընթացիկ պարտավորությունները գերազանցել են ընթացիկ ակտիվները 156,590,015 հազար դրամով, իսկ ընդհանուր ակտիվները՝ 85,110,127 հազար դրամով: Ինչպես նշվում է աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 2 (բ)-ում, այդ հանգամանքները, Ծանոթագրություն 2 (բ)-ում նկարագրված այլ հարցերի հետ մեկտեղ, վկայում են էական անորոշության առկայության մասին, որը կարող է նշանակալի կասկածներ հարուցել անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու Ընկերության կարողության վերաբերյալ: Աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը ձևափոխված չէ այդ հարցի հետ կապված:

Ղեկավարության պատասխանատվությունն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է արտահայտել կարծիք, թե արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին՝ հիմք ընդունելով Աուդիտի միջազգային ստանդարտ 810 (վերանայված) *«Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ»* համաձայն իրականացված մեր ընթացակարգերը:

Լուսինե Սարդարյան
Առաջադրանքի համար
պատասխանատու գործընկեր

Իրինա Գևորգյան
Ղեկավար գործընկեր,
«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն

KPMG Armenia LLC

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
30 դեկտեմբերի 2024թ.

«ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ»
«KPMG ARMENIA»
02529689

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն առ 31 դեկտեմբերի 2023թ.

հազ. դրամ	**31 դեկտեմբերի 2023թ.**	**31 դեկտեմբերի 2022թ.**
Ակտիվներ		
Հիմնական միջոցներ	71,314,129	86,752,113
Ոչ նյութական ակտիվներ	165,759	201,115
Ոչ ընթացիկ ակտիվներ	**71,479,888**	**86,953,228**
Պաշարներ	10,755,946	15,618,414
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	3,440,892	3,509,895
Կանխավճարներ ընթացիկ ակտիվների և ծախսերի համար	1,933,528	558,338
Փոխհատուցման ենթակա ԱԱՀ	936,928	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,826,928	738,608
Ավանդներ	-	24,750
Ընթացիկ ակտիվներ	**18,894,222**	**20,450,005**
Ընդամենը ակտիվներ	**90,374,110**	**107,403,233**
Սեփական կապիտալ		
Բաժնետիրական կապիտալ	3,100,100	3,100,100
Լրացուցիչ կապիտալ	22,575,738	18,870,973
Կուտակված վնաս	(111,910,545)	(78,470,328)
Ընդամենը սեփական կապիտալ	**(86,234,707)**	**(56,499,255)**
Պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	711,836	615,883
Տեղանքի վերականգնման գծով պահուստ	412,744	673,272
Ոչ ընթացիկ պարտավորություններ	**1,124,580**	**1,289,155**
Վարկեր և փոխառություններ	168,992,444	157,344,294
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	6,491,793	5,269,039
Ընթացիկ պարտավորություններ	**175,484,237**	**162,613,333**
Ընդամենը պարտավորություններ	**176,608,817**	**163,902,488**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	**90,374,110**	**107,403,233**

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ հաշվետվություն 2023թ. համար

հազ. դրամ	**2023թ.**	**2022թ.**
Հասույթ	29,774,650	20,244,120
Վաճառքի ինքնարժեք	(25,680,260)	(13,130,610)
Համախառն շահույթ	**4,094,390**	**7,113,510**
Այլ եկամուտ	636,394	263,170
Իրացման ծախսեր	(672,050)	(89,488)
Վարչական ծախսեր	(3,300,844)	(3,023,243)
Այլ ծախսեր	(17,000,097)	(14,076,478)
Գործառնական գործունեության արդյունքներ	**(16,242,207)**	**(9,812,529)**
Ֆինանսական եկամուտ	26,823	31,505,834
Ֆինանսական ծախսեր	(16,582,176)	(14,358,013)
Զուտ ֆինանսական (ծախսեր)/եկամուտ	**(16,555,353)**	**17,147,821**
(Վնաս)/շահույթ մինչև շահութահարկով հարկումը	**(32,797,560)**	**7,335,292**
Շահութահարկի գծով ծախս	(642,657)	(2,714,698)
Տարվա (վնաս)/շահույթ և ընդամենը համապարփակ (վնաս)/եկամուտ	**(33,440,217)**	**4,620,594**

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2024թ. դեկտեմբերի 30-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Վլադիմիր Նանիկյան
Գլխավոր տնօրեն

Մկրտիչ Պետրոսյան
Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն 2023թ. համար

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.	3,100,100	13,270,019	(83,090,922)	(66,720,803)
Ընդամենը համապարփակ եկամուտ				
Տարվա շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ	-	-	4,620,594	4,620,594
Գործառնություններ բաժնետիրոջ հետ				
Ներված հաշվեգրված տոկոսներ՝ առանց 1,229,478 հազար դրամ հարկի (Ծնթգ. 18)	-	5,600,954	-	5,600,954
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**3,100,100**	**18,870,973**	**(78,470,328)**	**(56,499,255)**
Մնացորդը առ 1 հունվարի 2023թ.	3,100,100	18,870,973	(78,470,328)	(56,499,255)
Ընդամենը համապարփակ վնաս				
Տարվա վնաս և ընդամենը համապարփակ վնաս	-	-	(33,440,217)	(33,440,217)
Գործառնություններ բաժնետիրոջ հետ				
Ներված հաշվեգրված տոկոսներ՝ առանց 813,240 հազար դրամ հարկի (Ծնթգ. 18)	-	3,704,765	-	3,704,765
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**3,100,100**	**22,575,738**	**(111,910,545)**	**(86,234,707)**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն 2023թ. համար

հազ. դրամ	2023թ.	2022թ.
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ՝ ներառյալ ԱԱՀ	29,585,456	22,433,460
Մատակարարներին և աշխատակիցներն վճարված դրամական միջոցներ՝ ներառյալ ԱԱՀ	(19,345,286)	(14,523,511)
Պետական բյուջեից ստացված զուտ ԱԱՀ	250,000	1,206,740
Վճարված ռոյալթի	(2,925,000)	(4,530,000)
Վճարված արտահանման պետական տուրք	-	(1,982,470)
Վճարված հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	(1,675,333)	(839,360)
Կատարված նվիրատվություններ	(135,700)	(30,145)
Խորհրդի վարձատրություն	(300,719)	(70,528)
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից՝ մինչև տոկոսների վճարումը	**5,453,418**	**1,664,186**
Վճարված տոկոսներ	(161,957)	(43,003)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական հոսքեր	**5,291,461**	**1,621,183**
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(4,055,001)	(3,540,740)
Ավանդների տեղաբաշխում	(68,000)	(24,750)
Ավանդների մարում	92,750	-
Ստացված տոկոսներ	26,823	12,382
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական հոսքեր	**(4,003,428)**	**(3,553,108)**
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Մուտքեր վարկերից և փոխառություններից	-	2,078,846
Վարկերի և փոխառությունների մարում	(197,612)	-
Ֆինանսավորման գործունեության համար (օգտագործված)/ ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական հոսքեր	**(197,612)**	**2,078,846**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	**1,090,421**	**146,921**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի	738,608	640,025
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(2,101)	(48,338)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի	**1,826,928**	**738,608**

Դրամական հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:

1. Պատրաստման հիմունքներ

Այս ամփոփ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են «Թեղուտ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն պատրաստված 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա՝ ստորագրված 2024թ. դեկտեմբերի 30-ին: Այս ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են միայն ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2023թ. և այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները, որոնք վերցվել են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների 6-ից 9-րդ էջերից՝ առանց որևէ փոփոխության: Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում ներկայացված բացահայտումները: Ընկերության աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները կարող են տրամադրվել ըստ պահանջի Ընկերության գրասենյակից (հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գյուղ Թեղուտ, 3-րդ փողոցի 2-րդ փակուղի, №2 (Թումանյանի տարածաշրջան)):